

ՀԱՅ-ՎԵՆԵՏ

(ՏԵՍ յէջ 10)

Գ. Անտէրունի կամ կրետեայ Հայ գաղթականութեան յիշատակէն 20 տարի վերջ, առաջին անգամ յիշատակ կ'ըլլայ ի վենետիկ Հայոց տան մէջ մատրան, կամ որպիսի և է պատարագելու տեղոյ, որ Ա. Պարագային մէջ ալ յիշուեցաւ (Բագմ. Խօթ. 98): Այս բանս նշանակուած է Հատինէ թարգմանուած պատարագամատուցի մի մէջ և գրուած (յամի 1438) ի բոլոնիա քաղաքի իտապիլոյ, այն տեղի Հայոց վանաստան կամ հոգետան մէջ. զիրքն հիմայ Բարիդու մեծ գրատան մէջ կը պահուի. բայց ասեն մի կ'երեւի բերուած ի վենետիկ. վասն զի վերջի թղթին վրայ կը գրէ Գորդ կամ Գէորգ անուն մէկն՝ յամի 1434, անչափ ձեռքով բայց տիրաբար, իբրեւ այն ատեն ժանօթ և նըշանաւոր անձ մի, ուրիշ պատուաւոր Հայազգի մ'ալ յիշելով կ'ըսէ. «Ո՞նչ է ՊԶԳ Հայոց. (1434) Ես Գորդս կու տամ Պարոն Յակոբին և իր որ և գոյն զայ Միսալս որ է Պատարագամուետոր. ով որ զայ ի վենէժս, որ կա «մի պատարագ առնել, նա առնու և պատարագ առնէ ի Հա տունն» . . . Երկու տող ալ կ'աւելցընէ կիսաս բառերով, որով կ'երեւի պահանջել որ զիրքն տպահով պահէ Պարոն Յակոբն ու իր որդին: — Ինչպէս Գորդի՝ այսպէս Յակոբայ ալ ո'վ և տասի գալն՝ յայտնի չէ⁽¹⁾ կըրնայ կարծուիլ թէ Ղրիմո կողմէն ըլլայ, գոնէ ժամանակ մի ի վենետիկ բնակելու կամբ ունենալով ուր, խօսքէն կ'երեւի, որ արդէն կը բնակէր Գորդ ի տան Հայոց, և ուր երբեմն կը հանդիպէին և կը պատարագէին Հայ կարգաւորք: Իսկ պատարագատելին կ'երեւի թէ սենեկի մէջ խորան կամ սեղան մի էր. և զեռ հաստատուն պատարագիչ կամ մատրանապետ քահանայ շկար. Թողունք ուրեմն որ ժամանակն քիչ մ'ալ առաջ երթալով՝ նորէն յերեւան հանէ Հայոց եկեղեցոյ իշնդիրն ի վենետիկ:

Դ. Հիմայ աչք մի տանք յարեւելս, ուր շատ մեծ քաղաքական փոփախութիւններ կ'ըլլան, որոյ նմաննք հազիւ երբէք հանդիպած են ի պատմութեան. և թէպէտ մեր նպատակէն զուրս է զանոնք քննել կամ յիշել, այլ որովհետեւ վենետաց հետ ալ յարաբերութիւն ունին, ասոնցնով Հայոց հետ ալ եղած է. հարի է գոնէ մէկ խօսքով միայն ներկայացրնել Ասիոյ և Եւրոպիոյ

1 Թերեւ սդիպուած ըլլայ, բայց ստոյդ է որ ՃԶ գարու մէջ նաեւ ցկէս ԺԵԲն, Հայոց տան գլխաւոր բնակչաց և պահապանաց շատերն Գէորգ և Յակոբ կոչունն, և շատ հեղ կը յիշուին այլեւայլ գործերով Գէորգ որդի Յակովայ, Յակովը որդի Գէորգայ. այլ թուրք թէ ունանք նոյն ցեղէ են որդին որդի. ասոնցմէ երեք չըրսն հարիւր տարեկան մերաւ նշանակուած են:

կցորդութեան գեղեցիկ, զարմանալի և բաղդասահման կայուն ու անկայուն կապըն ու միջոցը. վասփորի Մովլագետն. որոյ արեւելքէն յարեւմուտա անցնելով Օսմանեանք, ոչ միայն կոստանդիանեան հազարամերայ կայսրութիւնը լերուցին, այլ եւ նոր զար նոր տեսարան բացին պատմութեան և աշխարհալարութեան, ընդարձակելով զարեւելականութիւն և ամփոփելով զարեւմուականն : Այս ամենամեծ յեղափոխութեան ժամանակ և ի տեղին, (ի կ. Պօլիս), ամեն ազգէ և ամեն աշխարհէ մարզի գտնուէին: ոչ այնքան բաղդաքական գործոց և դաշնակցութեանց համար, որքան վաճառականութեան: Այս նկատմամբ՝ յայս է որ ամենէն գործունեայք և շահավաստակ յԵրտպակացոց՝ էին Ճէնովացիկ և վենետիք. (Երկուքն ալ երբեմն զինաւորք արեւմուեան վաճառակցաց Հայոց). առաջինքն՝ Յունաց օգնական ըլլալով՝ անոնց ճգնաժամ պատերազմին և կայսերական քաղաքին նուաճման ասեն, չէին կրրնար համարձակիլ յաղթող Սուլուսնին առջեւ. իսկ Երկրորդքն (Վենետիք) իրենց խորագիտ քաղաքալարութեամբ, միանգամայն և հակառակութեամբ ընդ Ճէնովացիս, աւելի համարձակ էին: որով այն մեծ և բազմազդի քաղաքին մէջ (զատ ի Յունաց) արեւելեան ժողովրդոց պաշտպան կեցան, ասոնք էին Հայք և Հրեայք. յաղթող նոր տէրութիւնն ալ համանեցաւ. և այսպէս հեռու և օտար՝ այլ մեծ կենդրոնի մի դրայ՝ նոր կապ մի եղան Հայ-Վենետիք :

Ոչ որ կարծեմ կը տարակուսի՝ որ արդէն բաւական բազմութիւն մի Հայոց կար ի կ. Պօլիս, և թէպէտ նոր գաղթականներով աւելի բազմացոց զանոնք սովորանն, այլ առաջնոց շատութեանը վկայ է և իրենց յատուկ եպիսկոպոս ունենալն, որ կը յիշով ժԴ գարուն սկիզբէն ալ (1307): Քանի որ Վենետիք շարունակեցին իրենց պայլերը⁽¹⁾, նաւարկութիւնը և վաճառականութիւնը ի նորափոխեալ հին քաղաքին, աներկայ է և Հայոց ոչ միայն իրենց հետ գործ տեսնելն, այլ և անոնց նաւերով երթալ գալն ի վենետիկ :

Այս մեծ յեղափոխութեան ասեն՝ թէ և ոչ շատ նշանաւոր՝ այլ և ոչ աննշան Հայոց ազգին համար կ'ըլլապ՝ իրենց բուն երկիրը. և այն ալ նոր յարագերութեանց և ծանօթութեանց առիթ Հայ-Վենետիք: Մինչզեռ Օսմանեանց ի ԺԴ և ԺԵ զարս Փոքր Ասիոյ մէջ դէպ յարեւմուտս և ի հարաւ յառաջ կ'անցնէին՝ մինչև ուր որ տեսանք, Հայաստան և իր զրակից Ասորուց երկիրն՝ անոնց ոչ հեռաւոր տորմակից երկու թուրք ցեղերու տիրապետաց կամ բանաւորաց բարբարական իշխանութեան տակ ընկած էր. ծանօթ են Սեւ և Ճերմակ խոյ կոչուած առհմքն. (Գարագօյունշու, Ազգօյունշու), որը երբեմն իրարու հետ հաշտ և երբեմն անհաշտ՝ անկանոն տէրութեամբ կը նեղէին թէ զիրար և թէ զժողովորդն: իսկ այն ժամանակ որ Օսմանեանք գօրանալով՝ հաստատեցան կ. Պօլիսի գահի վրայ, այս ասիական կողմէերս ալ զօրացան Սպիտակախոյք նուաճեցին զԱբեւափոյս: և ոչ միայն զօրացան՝ այլ եւ քաղաքականութեան ճաշակ առին և

1 Ասոնց ապարանքն բնշուան հիմայ Պալեօգ կոչմամբ կը յիշուէ և կը լսուէ ի կ. Պօլիս:

արեւմտեայց հետ ծանօթութիւն և յարաբերութիւն հաստատեցին. այս բանիս մէջ ալ վշենեաց և Հայոց քիչ շատ գործ կայ: Այն Սպիտակ տոհմին (թէ և սեւանուն՝ Գարա Օսման կամ Գարա Եօլուզ) նահապետն արդէն Տրապիզոնի կոմինենեան Յունաց կայսերութեան հետ ընտանեցեր էր, Ալեքս կայսեր գուստը լը կին առնըրով. հիմայ իր թոռն՝ անուանին Ռւզուն Հասան կամ Հասան Բէկ՝ Յովհաննէս կայսեր գուստը առաւ (զոր ժամանակակից գրիշք մեր Դեսրինա Խարուն կոչեն, փոխանակ ըսելու Դեսպոդինա): Այս ոչինչ նուազ քան ըգ-Սուլտանն (Մէհմէմէտ) յաղթող ինքնազլուխ Բէկին՝ որ Հայոց, Պարսից և Ասորոց տիրող երեք զլովիներն ալ վերցուցեր էր և կը միավետէր այնքան ընդարձակ աշխարհաց, ընականապէս սահմանակից կ'ունենար զ(Օ)սմանեանս Երկու մեծ և հզօր անկախ տէրութիւնց ձեւացան, միշտ աշխարհակալելով. հարկ էր որ այդ սնույ իրարու բարեկամ շըլլային, և քիչ ուշ կամ շուտ իրարու զարնուէին: Ասունց խորհուրդն և գործն՝ մեր նպաստակին գուրս է. միայն հարկաւոր ըսելիքն այս է, որ Ռւզուն Հասան՝ ոչ միայն հզօր այլ եւ հեռատես քան իր նախորդը, կշունը իր զմբէ իրեն հակառակող ըլլալու Օսմանեան տէրութեան հետ, և անոր զինուց և հրազինուց առաւելութիւնը, կարեւոր համարեց աւելի կիրթ և վարժ օգնական մ'ունենալ. և աշբը զարձաց գեպ ի վշենեափէ, որոյ վաճառականը և Պայլք վաղուց ի վեր՝ կ'երթմեւեկին և կը նստէին ի Դաւրէծ: Մէր աւելի հետատես և խորաբէս ծովագաղաքացիք ալ՝ որչափ որ Օսմանեանց հետ գաշնակցութեամբ և հաշտութեամբ կը վարուէին կ. Պօլսոյ տիրախոսութեան ատեն, լաս կը զգային որ չէր կը բնար երկար ատեն տեւել բռնի բարեկամութիւնը. Օսմանեանք ոչ կամ շուտ ընդ ծով և ընդ ցամաք պիտի շարունակին իրենց յառաջազիմութիւնը. և եթէ ոչ ի ցամաքի՝ այլ ի ծովու մեծ վտանգ կար վշենեաց, իրենց ծովիերու մէջ սփոռած հարտուս կղզեաց կորըստեան, և իրենց ծովային զօրութեան՝ ահարկու հակառակորդի: Ապա իրենք ալ աշուընին զարձուցին առ Հասան Բէկ, ճանշալով անոր զմբը, արթնութիւնը, և իրեն նախունեաց աննման քաղաքավարութիւնը. և յառաջ քան իրօք և զրօք՝ ծածուկ կամ համակրական ընտանութիւն մի եղաւ, որ քիչ քիչ փոխեցաւ և ի գաշնակցութիւն: Վենետոց Դըսին Պայլքն՝ ի դեսպանա փոխեցան, որոց եօթն կամ ուկ մէկմէկու ետեւէ եկած են առ Բէկին՝ նայնքան քիչ տարիներու միջոց (1470–78). եաքի թուականիս (1478) մեռած է Հասան:

Սա զրգուած իր նոր զանակիցներէն՝ որը սկսան վախցընել թէ Օսմանեանք կը պատրաստուին իր երկիրները կոխելու, ուզեց կաննասոր և հաստատ բարեկամութիւն և օգնականութիւն հաստատել, և սկսաւ իր կողմէն ալ վեսպան խարել ի վշենեափէ (1464–8), նախ մէկ երկու Պարսիկ, յետոյ աւելի յաջողելու համար ուզեց Հոռվմայ Ա. Քահանայապետին ալ խարել, և այս բանիս յարմարագոյն համարեց քրիստոնեայ մի, Հայ մի:

Ե. Այս երկու վեսպանութեանց միանապամայն կատարող Հայն՝ կոչուէր Միրատ, բատ իտալական թարգմանութեան թղթոյ Բէկին (ի պարսկերէնէ), իր հաւատարիմ սպասաւոր կամ պաշտօնեայն. Mando... questo Nontio e fedel

servidor nostro, il quale si chiama *Mirat*, de nazion Armeno. Թուղթն գրուած է ի Սուլտանիա, ուր էր այն ասեն արքայական աթոռ թէկին, չ' 2 օգոստ 1469 տարւոյ. Միրատայ անունն կըրճնար Մուշրատ ալ ըլլալ, բայց հաւանագոյն է որ ըլլայ Միրաք, ինչպէս պիտի յիշեմք յետոյ։ Սա թէ յառաջ կամ վերջը գացե՞՞ է և ի Հոռովմ առ Պատան Պօղոս Բ. շեմ զիտեր. այլ ի վենետիկ հասաւ փերրուար ամսու մէջ, 1470ին, և մարտի եօթին ներկայացուց իր տիրոջ թուղթը հանգերձ խալերէն թարգմանութեամբ. յորում կ'ըսէր թէկին իր յաղթութիւնները, և երեք տիրապետները վերցընելը. կը մնար չորրորդը՝ զոր կ'անուանէր Օսմանի որդի Մէհմէտ թէկ (Սուլտանն), զոր և յուսար վենետաց նաւազօրուն օգնութեամբ, և իր ցամաքային բանակաւ՝ քջել հանել թէ յեւրոպիոյ և թէ յԱսիոյ. (բայց պատերազմի բաղդն ալ ինչուան վերջ օգնական չեղաւ իրեն)։ Խորագէտ և երեմն խորամանկ Եներակոյան շորս ամիս ուշացուց պատասխան առաջ Միրաքայ զոր պատուլ պահէր ի վենետիկ. վասն զի այն ասեն Սուլտանին հետ ալ գաշնաղութիւն ունէր, և կը սպասէր իր պատգամաւորաց լուրերուն. և երբ Դրան հետ խօսակցութիւնն յերկարեցաւ, Միրաքայ իմացոց՝ որ իրեն փոխարէն Դուքսն ալ գեսպան կը խափէ (զկատերինոյ Ծենոյ), և անոր քերնով ամեն բան կը ծանուցանէ. բայց վախնալով ալ որ ճամբան փորձանաց չհանդիպի, պարսկերէն պատասխան մ'ալ զրել տուաւ և յանձնեց առ Միրաք՝ որ տայ տիրոջը. գրուածն՝ շնորհակալութիւն մ'էր բարեկամական, միանգամայն և յորդոր աղէկ պատրաստութեան ընդգէմ Օսմանեանց. որոց զէմ թէ և Հասան իր որդոյն առաջնորդութեամբ խաւրած էր 40,000 զօրք ի Գարամանիա (Կիլիկիոյ Կողմերը), բայց բաւական չէր համարեր. Երկու գեսպանց ալ իրենց սպասաւորներով և բնկերներով միատեղ պիտի ճամբուէին, յայտ է թէ, ըստ առկուրութեան՝ ընծաներ ալ առնելով և տանելով. բայց գարձեալ զէպէտ առիսպեցին որ կատերինոյ ուշանայ ի վենետիկ մինչեւ ի սեպտեմբեր ամիս. իսկ Միրաք ալ սպասնց արդեօք եթէ մինակ գնաց, և ի՞նչ ընդունելութիւն ունեցաւ ի Հասանայ, յայտն չէ. որովհետեւ Ծենոյի յատուկ զրած գեսպանութեան պատմութիւնն կորած է։ Բայց յեայ կ'երեւի թէ Միրաք անակնակ վախնան մ'ունեցեր է, (համարելով միշա որ նոյն են Միրաքն և Միրատն)։ — Հասանայ մահուանէն տասն տարի վերջ (1488) կը զրէ ժամանակից ազգային մի, թէ Դաւրիժու «զատին թաթար էր, և հալածէր զքրիստոնեայու. . . (և) Տաճիկ ուն Մէհմէթի սպան զիօնայ Միրաքն, վասըն ի Քրիստո հաւատոց. որ և յիշատակն օրնութեամբ եղիցի»։ Այս յիշատակը Յայսմաւորը կ'աւանդեն երկարորէն, ի 21 Մարտի, որ օր (աւագ ուրբաթուն) նահատակեցաւ. Վենետիկցի ականաստեսք ալ պատմեցին իրենց Յովլսափատ Պարպարոյ գեսպանին (որ յետ կատերինոյ եկած էր), ինքն ալ կը յիշէ իր զրած տեղեկութեանց մէջ։

Միրաքայ գեսպանութեանէն քանի մի ասրի վերջ՝ երկու հեռաւոր դաշնակիցքն վենետիկ և Պարպար իրենց կողմը ձգելով զԳարամանն ալ (Կիլիկիոյ մասին իշխողն), քանի մի ծովեղերեւայ բերգեր գրաւեցին (Կոռիկս, Սելեւկիա, Միկոյ

բերդ, և այլն), բայց ցամաքի վրայ առաջ յաջողելով՝ վերջը ձախողելով՝ ի դերձան մեծ պատերազմի մէջ, Հասան մեռ քաշուեցաւ, վենետից ալ կարճ ժամանակ մի ողջունելով իրենց հարց ծանօթ հին դաշնակցաց (Հայոց) ծովափունքը՝ նաւերնին և զէնքերնին յետ գարձուցին, ոչ անցաւ աչօք դիտելով իրենց ալ անոնց ալ անրաւ հարստութիւն բղխող Այսայ կիսաւեր բերդերն ու ամայացեալ նաւանանգիստը։ Անկէ հեռանալու ատեն կը հանդիպէին ի կիպրոս, ուր՝ ճիշդ դար մի յառաջ Հայոց իշխանութեան դապրած տարին՝ մասն մի ժողովրդեան՝ անցեր էր այս դրացի կղզին, իրենց Լիւզինեան թագաւորաց ազգականաց քոյլ, և ոմանք անոնց արքունեաց մէջ պաշտօնեայ եղած էին, ու մանք ալ գետիներ գնած տեղացի զարձեր. որոց սերունդէն գեր գտուին մինչեւ այսօր ալ։ Բայց այս յիշեալ ժամանակու (4475) կիպրոսի Լիւզինեան թագաւորաց ցեղն ալ նուազեր էր, և թագաւորութիւնն ընկած վերջի թագաւորին կնոջ, զեղեցկութեամբ և պէսպէս բազդով հոչակեալ վենետիցի կատարին գոռնարոյ զշխոյի, որ վերջինն եղաւ կիպրոսի և լեռուսաղեմի հետ Հայոց քառոչի ալ անուանելու, և գնոյն զրոշմելու իր շիրմին վրայ ալ, ի վենետիկ. ուր ճարտարութեամբ կամ խարէութեամբ փոխազրեցին զինքը՝ իր հայրենակիցքըն վենետոց, և մինչեւ ի մահն օրինաւոր թագուհոյ պատուով և անուամբ մեծարեցին. որոց փոխարէն՝ այն մեծ և պատաքեր զիներեր կիպրոս կղզին իրենց հասարակապետութեան ժառանգութիւն ըրին, յամին 4489։ Բայց շմորցան և զայս. և երբ կղզոյն առաջին կուսակալ հոգոյող կարգեցին (զօգոստինոս Պարպարիկոյ), յատկապէս պատուիրեց Երեսակցոտն (ի 27 օգոստ. 4489) որ Հայոց ալ սահմանեալ թոյակները տայ իրաքանչիւր արդեանց համեմատ. բայց երբ անոնք հեռանան կամ մեռնին՝ անոնց տեղ ուրիշ անձ չի դնէ, առանց ծերակուտին հարցընելու⁽¹⁾։

Յայտ է ասով՝ որ Ռուբինեանց պայազատաց՝ վերջին գ. կոստանդեանց և Լեռնեանց ազնուական Հայ պաշտօնելից սերունդքն՝ վեր աելի քան զար մի և մինչեւ ի վերջ Ժե տարու՝ կերպով մի կը յաջորդէին իրենց նախնեաց ի կիպրոս, նա եւ ընդ իշխանութեամբ վենետաց. որոց ոչ սակաւ օգոստիկար ծանօթին և ժառայութիւն ալ ըրին թէ այս թէ յաջորդ գարուն մէջ, քանի որ անոնք կը ջանային Պարսից ձեռօց իրենք զիրենք ապահովել յօսմանեանց, ինչպէս պիտի տեսնեմբ այս ետքի դարուս (Ժ. Ակիզբները, յետ յիշելու քանի մի Հայոց Երեւոյթ կամ յիշատակ ի բուն ի վենետիկ, նախորդ (Ժ. Պարու յետին սասանաւելին միջոց։

1 Armeniis dari facies pro eorum merito statuto stipendium suum consuetum. Loco autem eorum qui pro tempore deficiunt, non surrogabis aliquem, absque expressa licentia et ordine nostro.